ՀԱՅԱՍՏԱՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐՀՈՍՔԻՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼՈՒ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ՓԱԹԵԹ

ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

2023 թվականին Հայաստան փախստականների ներհոսքից հետո Եվրոպայի խորհուրդը մեկնարկեց համալիր արձագանքման փաթեթ, որի ընդհանուր բյուջեն կազմում է 2.8 միլիոն եվրո և որը Հայաստանի համար Եվրոպայի խորհրդի Գործողությունների ծրագրի (2023-2026թթ.) անբաժանելի մասն է:

Արձագանքման փաթեթի շրջանակներում աջակցությունը իրականացվում է չորս նոր ծրագրի և երկու ընթացիկ ծրագրում ներառված լրացուցիչ բաղադրիչների միջոցով: Նպատակն է աջակցել տեղահանված անձանց մարդկանց իրավունքների պաշտպանությանը, փախստականներին ընդունած համայնքներին և ապահովել արժանապատվություն, անվտանգություն և հավասար հնարավորություններ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Մարդու իրավունքների պաշտպանություն. փախստականների իրավունքների պաշտպանություն:

Տեղական իշխանություններին աջակցություն. փախստականների մեծ համամասնություն ունեցող համայնքների ներուժի ամրապնդում:

Սոցիալական իրավունքներ. անհրաժեշտ աջակցության և խնամքի մատչելիության ապահովում, ներառյալ՝ խոցելի խմբերի ներկայացուցիչների համար:

Երեխաների և կանանց իրավունքների պաշտպանություն. աջակցություն խոցելի խմբերին:

Մարդու իրավունքների պաշտպանության հաստատությունների ամրապնդում. հաստատություններին աջակցություն մարդու իրավունքների չափանիշների պահպանման ուղղությամբ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Բարելավվել է փախստականների աջակցությունը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման միջոցով՝

Ստեղծվել է զանգերի կենտրոն, որը 2025 թվականի հունվարից ի վեր պատասխանել է ավելի քան 105 000 հարցման:

Փախստականների ծառայությունների մատչելիությունն ու որակը բարելավվել են՝ 150 առաջնագծի մասնագետների իրավասությունների ամրապնդման շնորհիվ, մասնավորապես՝ քաղաքացիության, փախստականի կարգավիճակի և ժամանակավոր պաշտպանության վերաբերյալ հուսալի տեղեկատվության մատչելիության բարձրացման ուղղությամբ: Արդյունքում, 2024-2025 թվականներին ընդունվել է քաղաքացիության ավելի քան 28,473 դիմում:

ՄՔԾ զանգերի կենտրոն

Ամրապնդվել է 10 քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) կարողությունը՝

Եվրոպայի խորհրդի չափանիշներին համապատասխան աջակցելու խոցելի խմբերին՝ հատուկ ուշադրություն դարձնելով չվերադարձելիության սկզբունքին, կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի արգելքին, ինչպես նաև կալանքի և ընդունման պայմանների չափանիշներին, ընտանեկան կյանքի իրավունքին և արդյունավետ իրավական միջոցներին:

Հակազդել է ատելության խոսքին՝

Հայ լրագրողների վերապատրաստման միջոցով, որպեսզի նրանք կարողանան ճանաչել և դիմակայել փախստականների և խոցելի համայնքների վերաբերյալ բացասական կարծրատիպերին:

Աջակցել է համայնքներին՝ իրականացնելու փախստականների ինտեգրման նախաձեռնություններ.

Դրամաշնորհների միջոցով չորս համայնք նպաստել է փախստականների ինտեգրմանը:

Սեմինարների արդյունքում 10 համայնք ստեղծել է դիմակայունության աշխատանքային խմբեր և մշակել ռազմավարություններ ու գործողությունների ծրագրեր՝ հզորացնելու բարդ մարտահրավերներին դիմակայելու իրենց կարողությունները:

Փախստականներին տրամադրվել է հոգեբանական աջակցություն

200 փախստական բուժաշխատողներ մասնակցել են կենսաբժշկության ոլորտում ազգային և Օվիեդոյի կոնվենցիային համապատասխան եվրոպական չափանիշների վերաբերյալ դասընթացների, որոնց արդյունքում հնարավորություն կունենան Հայաստանում զբաղվել մասնագիտական աշխատանքով:

Նույն խմբին տրամադրվել է նաև սոցիալ-հոգեբանական աջակցություն՝ իրենց հուզական այրումը կառավարելու, դժվար պացիենտների հետ հաղորդակցությունը և իրենց կողմից տրամադրվող բուժօգնության որակը բարելավելու համար:

Փախստական կանանց սոցիալ-տնտեսական հզորացմանն ուղղված աշխատանքներ՝ անդրադառնալով գենդերային հիմքով ռիսկերին և խթանելով գենդերային հավասարությունը, մասնավորապես՝

364 կանանց, այդ թվում՝ փախստական կանանց, հզորացում՝ ավելի քան 100 համայնքային միջոցառումների միջոցով, որոնք միտված էին կանանց սոցիալ–տնտեսական զորեղացմանը, բարեկեցության բարձրացմանը և սոցիալական կյանքին նրանց ակտիվ մասնակցության խթանմանը:

Փախստական կանանց ոգեշնչող պատմությունների ներկայացում՝ որպես կայունության և փոփոխության օրինակներ՝ վավերագրական կարճ դրվագների, փոդքասթների և հեռուստահաղորդումների միջոցով, որոնք Հայաստանում դիտել է ավելի քան 300 000 մարդ:

Հզորացվել են կարողություններ ավելի քան 200 պետական ծառայողների և առաջնագծի մասնագետների՝

Միգրացիայից և հակամարտություններից տուժած երեխաների հետ աշխատող՝ մասնավորապես խնամակալության, հոգեկան առողջության և տրավմայից վերականգնման ոլորտներում՝

Մշակվել են երկու թեմատիկ ուղեցույցներ:

«Միգրանտ և փախստական երեխաներ» և «Երեխաների պաշտպանությունը սեռական շահագործումից և բռնությունից» թեմաներով Եվրոպայի խորհրդի ՀԵԼՔ դասընթացները հարմարեցվել են ազգային համատեքստին, ինչը հնարավորություն է տվել ավելի քան 20 մասնագետների ընդլայնելու իրենց գիտելիքներն ու հմտությունները:

Պետական ծառայողներն ու մասնագետները բարձրացնում են իրենց կարողությունները ընտանիքից տարանջատված երեխաների արդյունավետ խնամքի ապահովման ոլորտում, հոկտեմբեր, *2024թ.*

Փախստականների սոցիալական իրավունքների պաշտպանության բարելավում հետևյալ միջոցներով՝

Մոտ 40 իրավաբան մասնագետների կարողությունների զարգացում՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ուղղությամբ՝ հատկապես փախստականների և այլ խոցելի խմբերի պաշտպանության վրա կենտրոնանալով:

Մարդու իրավունքների պաշտպանի համապատասխան աշխատակիցների վերահսկողական կարողությունների բարձրացում՝ սոցիալական իրավունքների խախտումների, այդ թվում՝ փախստականներին վերաբերող խախտումների հայտնաբերման և արձագանքման հարցերում:

Համակարգող հարթակի ստեղծում՝ Հայաստանում սոցիալական իրավունքների և փախստականների պաշտպանության ոլորտներում գործունեություն իրականացնող միջազգային կազմակերպությունների միջև համագործակցությունը բարելավելու նպատակով:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

www.coe.int/yerevan
coe.yerevan@coe.int

Council of Europe Office in Yerevan | Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ (2023-2026ԹԹ.)

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE